

ՔԱՏԱՆՈՐ ԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պոչկարիոյ համար
 Տարեկան 10 Պր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻՎ ԿՃԱՐԵԼԻ
 —(—)
 Գրութիւնքի և սրտի
 —(—)
 Իստուցման տար 20 սակ-
 քիւն և երեքին աւելի սակ-
 քաւններու համար 20 Օլօ
 գեղջ կըլայ:

ՇԱՐՇՈՒՄ

ամսի և ցրտի որկէ
 Եւրոպոսի քաղաքի հասցի ին.

Редация на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵՆԱԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
 АДВОКАТЪ

R. V. 2 Kalem evian
 Meslihtavostanogorac, 14 y
 Vienna (Austria)

ՍՈՓԵՍՏՈՒԹԻՒՆ

—(—)

Ժամանակ մը, երբ մեր լրագրութիւնը իր սաղմին մէջ կորուսար դեռ, ժողովուրդը լոկ համետ ունենալիք մը կը հանդիսանար իր շուրջը յարուցուած ընկերային, ազգային և այլ խնդիրներուն. մտիկ կընէր ու կը սորվէր՝ հլու մանկան մը պէս որ իր մօր ձեւերն ու խօսուածքը կընդօրինակէ տարիքի անցման համեմատութեամբ:

Ազգի մը առաջնաւորն ուղիղ, բանաւոր ճամբան է աս. եթէ ամէն մարդ խնդիրներու կորոզ թափող ըլլար, առաջ պիտի գար վճիվոց մը, թոհուրոհ մը, ուրանգործութեան պիտի դատուպարտուէին եղած բոլոր ազնիւ, անձնուրաց ու շինիչ ջանքերը, յուսահատութեան պիտի մատնուէին ազգին մտաւոր զարգացման գործին կոչուող անհատները, որոնք փոխանակ ինքզինքնին արտակարկառ գիրքի մը վրայ տեսնելու, անյայտ եղած պիտի զգային չորս կողմէն վեր ելող ուրուային սիրուէդներու մէջտեղ:

Հիմակ ճիշդ այս վերջին երեւոյթը իր ամէն ձախող մանրամասնութիւններովը տիրած է մեր ազգային բոլոր խաւերուն մէջ, ու խանգարուած է ան մեքենան որ կանոնաւոր հոլովումով պիտի գլուխ հանէր ժողովրդային բարոյական ու մտաւոր զարգացման աւագ գործը:

Հիմակ հանրային ընդարձակ սեղան մը գետնիցուած է մէջտեղ, որուն շուրջ բոլորուած են բոլոր հայերը առ հասարակ, քմահաճ նստուածքներով, խրոխտ, ամբարտաւան, վճռական, անհամբոյր, ու այդ սեղանին վրայ կը հանգչին մեր ազգային կեանքը գերազանցապէս շահագրգռող բոլոր խնդիրները: Սեղանակիցները մէկ դասակարգի չեն վերաբերիր. չքեղ այլազանութիւն մը կը տիրէ. ամէն արհեստ, ամէն տարիք իր ներկայացուցիչն ունի: Կատարեալ ընկեր-

վարութիւն մը, ուր սակայն ընկերվարական սկզբունքներ չեն քարոզուիր. ամէն կոչնական գաղափարի մը զեկը ձեռք առած կողէ առաջ քշել զայն: Ամէնէն մեծ, կենսական հարցերու լուծման հերոս կը հանդիսանայ այդ խառնափնթոր հաւաքոյթը:

Կոչկարը, հացագործը, բեռնակիրը, դատարկապորտը, դպրոցէն կիսաւարտ կամ ուսումնաւարտ ելած երիտասարդը, ժողովուրդի հասկցողն ու չհասկցողը, վարժապետը, մինչև իսկ կոչկալինջը խօսք կողքին այդ սեղանին վրայ. խօսք չեն ուզեր իսկ, իրենք ինքզինքնուն խօսք կուտան ու կսկսին պոռչտալ. ու այս բոլոր ձայներէն կը կազմուի աննկողմանակ, խժաուր նուագահանգէս մը, որուն մէջ կը խեղդուին առողջ, հզօր խաղերն ալ:

Ասիկա ազգի մը սոփեստութեան շրջանն է ուսից հիմա մենք կանցնինք, այս ախտին աւերաներուն անտեղեակ, անկարեկիր անոր առաջ բերած վէրքերուն ու ջանք մը չընելով, դարման մը չխորհելով անոր արմատաքի փճացմանը համար:

Հրապարակագիրը, ազգային հզօր գործիչը, անկեղծ ու անձնուէր ուսուցիչը իրենց պաշտօնակից ունին փողոցին մէջ իրենց գիմաւորած առաջին ու երկրորդ անխուսափելի կարծիք մը ունի և կատարաբար կը պաշտպանէ զայն: Այս կերպով կը նմանինք բանակի մը, որուն ամէն մէկ զինուորը՝ թշնամիին դէմ՝ ռազմագիտական ուրոյն յատակաձեւ մը ունենայ, զոր ուղէ գործադրել տալ: Ասանկ բանակի մը հրամանատարին ողբալի կացութիւնը երեւակայել:

Այս վիճակին շարունակութիւնը աղիտաւոր պիտի ըլլայ մեզ համար: Այն օրը ուր ամէն մէկ հայու հեղինակութեան չափը որոշուի, բացայայտ կերպով հասկցուի թէ ո՞վ պիտի վարէ հանրային ընդհանուր հարցերու ուղղութիւնը, պատասխանատուութիւնները ճշգրտին, ժողովուրդը

աւելի մտիկ ընէ քան խօլաբար պոռայ, այն օրը երբ սոփեստութեան ախտէն կարենանք մեր օձիքը ազատել, գիտցած ըլլանք որ մեծ բան պիտի վատրկինք ու մեր վիճակը անհունապէս պիտի բարեփոխուի:

ՇԱՐՇՈՒՄ

ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՏԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ԶԵՆՈՑ

—(—)

Անունը երկար է, բայց պարունակութիւնը շատ կարճ կը թուի Պ. Սապահ-Գիւլեանի այս վերջին երկասիրութիւնը կարգացողներու:

Այս գիրքը պարզ ներածութիւնն է առաջիկայի երկրորդ գրքի մը որ Արեւելեան խնդրին Պերլինի դաշնագրէն ետքը ստացած երեւոյթներուն վրայ պիտի խօսի: Առ այժմ կը խօսուի բոլոր այն պատմական անցքերու մեքենականութիւններուն վրայ որոնք պատճառ եղած են աշխարհիս այս քաօսային վիճակին, այս զինուած խաղաղութեան, այն փոխադարձ անվստահութեան որուն ապացոյցը կուտան տէրութիւնները ամէն օր: Ամէն շաքիք առաջ եկած է Պերլինի դաշնագրէն: Այդ դաշնագիրը աղիտաբար եղած է ամենուն և զժգոհ թողած բոլոր մեծ ու պղտիկ ազգերը. թէ՛ պատերազմիկները և թէ՛ պալգանեան փոքր պետութիւնները և թէ՛ հայերը: Եւ այս բոլոր զժգոհութիւններուն բանաւոր պատճառները կան:

Ռուսիա ինքզինքը շատ քիչ վարձատրուած կը համարի իր զոհողութիւններուն փոխարէն, Ռուսիան Պետարպիային տեղ ճախճախուտ Տօպրուճան ստացած ըլլալուն կը բողբէ: Սերպիան և Մոնթենեկրօն զժգոհ են՝ Հերսէկ-Պոսնան Աստրիոյ անցած ըլլալուն, Յոյնը իր ցանկացած հողին միայն երրորդ մասը ստացած ըլլալուն, Պուլկարիան երկու մասի բաժնուած ըլլալուն. հայը՝ իրեն արուած համեստ

խոստումները չկատարուելուն: Պերլինի դաշնագիրը գէթ եւրոպական վեց տէրութեանց փոխադարձ համաձայնութիւնն ալ չէ կրցած ամրապնդել. և յարատեւ վէճերու բաց դուռ մը յօրինած է:

Եւ սակէց ծագած է երկեակ եւ երրեակ դաշնակցութեանց հաստատման պէտքը, որոնց յղացման և իրականացման մէջ կը փայլին Պիզմարք իշխանի դիւային ոգին և դիւանագիտական հանգ կարողութիւնները, Անգլիոյ հաշիւները, Փրանսի վախերը, Իտալիոյ երազները, Ռուսիոյ քինախնդրութիւնը:

Գիրքը քաղաքական յօդուածներու շարք մըն է յստակ և որոշ գծերով գծուած: Ամէն տողին մէջ կը պատկերանայ աշխարհի վարիչներուն քսու հաշիւները, որոնց ամէնքն ալ հեռի մարդկային երջանկութեան ձգտելէ, զայն օր օրի մթագնելու ետեւէ են, փրթուծ մը հողին սիրուն համար, անիրաւօրէն յափշտակուած ստացուածք մը պահպանելու համար՝ բռնութիւնը, տիրապետութիւնը յաւերժացնելու նպատակով:

Ամէն անոնք որ լրագրութեան կը հետեւին և կըղձան աւելի մօտէն թափանցել իրողութեանց, մանաւանդ արեւելեան խնդրին, որ այնքան մօտէն կը շահագրգռէ մեզ, կրնան օգտուիլ իրենց ուղղութեան առարկայ ընելով Պ. Սապահ-Գիւլեանի այս գիրքը: Քանի մը էջէր կան որոնք ընտիր ուսումնասիրութիւններ կը պարունակեն: «Խաղաղութիւնը ազատութեամբ» ամէնէն սիրելի գլուխներէն մէկն է: Եւրոպան եւ միւս երկիրները խաղաղութիւն պիտի գտնեն այն ատեն երբ քաղաքական—ընկերային ազատութիւնը ամէնուն անկապտելի սեփականութիւնը դառնայ: Երբ ամէն ազգութիւն անկախ ըլլայ, երբ իր երկրին քաղաքական և տնտեսական տէրը դառնայ, այն ատեն ընդհանուր խաղաղութիւնը ինքնիրեն կապահովուի:

Պ. Սապահ-Գիւլեան իր գրքին

մէջ չի մտնար նաեւ հայրը՝ երբ
 բեւ վերջին անգամ արեւելեան
 խնդիրը բացողը և իբր անոր
 ամենէն մեծ շահակիցներէն մէ-
 կը : Հայը, կըսէ, իր երկարա-
 տեւ գոյութեան ընթացքին մէջ
 ցոյց տուած է այնպիսի բարոյա-
 կան ուժ մը և կենսականութիւն
 մը, որ միայն ապագայ ունեցող
 ազգերու յատուկ է : Հայուն կոր-
 սընցնել տուած են ազատութիւնը,
 բայց չեն կրցած մոռցնել տալ
 զայն : Հայը իր պատմութիւնով
 ցոյց տուած է թէ ինք այն աղ-
 զերէն է որոնք զիտեն դարաւոր
 կռիւ մղել դադարի մը հա-
 մար . այդպիսի յատկութիւննե-
 րով օժտուած ազգ մը, վաղ կամ
 ուշ, անպատճառ կիրառործէ իր
 իտէալը, ինչ խոչնդոտներու ալ
 հանդիպի : Հայուն կը մնայ չը
 վճատիլ և անընդհատ կերպով
 շարունակել իր արդէն սկսած
 իրական պայքարը մինչեւ որ իր
 իտէալը՝ ազգային և ընկերային
 ազատութիւնը ձեռք բերէ :

Արդոյ հեղինակը շնորհատրելի
 է այնքան քաղաքական ժամա-
 նակակից և շահեկան դէպքերու
 ամփոփոյթի մը հրատարակման
 գաղափարը յղանալուն, որքան
 իր յայտնած յստակ տեսութիւն-
 ներուն համար որոնք տեղ տեղ
 մաթեմատիկական ճշտութեան
 շեշտեր ունին : Անհամբեր կը
 սպասենք խոստացուած երկրորդ
 և լրացուցիչ մասին, որ իր բը-
 նութեամբն իսկ անշուշտ ա՛լ ա-
 ւելի շահեկան պիտի ըլլայ :

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

—)(—

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻՎՈՒԹԻՒՆ ԹԵՎԱԿԱՆԱԿԱՆ (23)

Այդ բոլորից յետոյ մենք կատա-
 րել տուինք մեր առաջին տերորա-
 կան գործը Տաճատ վարդապետի վրա .
 տերորիստը մի տասնութ տարեկան
 Սահակ անունով երիտասարդ էր,
 որը միայն գտնվեց այդ յանդուզն
 քայլը անելու, թէև նրանց տերո-
 րական խմբակը շատ վաղուց էր
 խոստացել այդ գործը կատարել :
 Պէտք է խոստովանվել որ այդ խում-
 բը շատ զօրաբութեամբ կազմեցինք .
 առաջ շատերն էին ցանկանում,
 բայց երբ մանրամասնորէն ամեն բան
 պարզեցինք, շատ քչացան : Այդ
 խումբի վարիչներն էին հացագործ
 Նշանը և մասամբ էլ կարապետ
 Քիւրքեճեանը, որը և Սահակին փախ-
 ցրեց : Այդ երիտասարդը շատ հա-
 մակրելի, պաղարիւն, համեստ և
 անձնէր սղա էր :

Տաճատի վրա կատարված տերո-
 րական փորձը անգին տպաւորու-
 թիւն գործեց Պոլսի հայութեան վրա
 և սարսափեցրեց թուրք կառավա-
 րութիւնը : Այդ փորձից յետոյ սկը-
 սեցին սեղանակի զանազան նամակ-
 ներ շատ անատներէից, որոնք հա-
 մոզված էին կամ կասկածուած էին որ
 հայ ժողովուրդը իրանց վրա վատ
 կարծիք ունի, ազգադաւ ու թրքա-

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ ՍԸ ՎԱԻՃԱՆԸ

—)(—

Կիրակի օր հանդէս մը եղաւ տեղ-
 առայ Ս. Սարգիս եկեղեցիին մէջ :
 Այդ հանդէսին անունը մրցանակա-
 բաշխութիւն ըլլալուն երկու սեռէ
 բաղմութիւն մը ներկայ էր, որ,
 սակայն, իր ակնկալածէն տարբեր
 տեսարանի մը հանդէպ գտնուեցաւ :

Ասիկա վերջին վարագոյրն էր զա-
 ւեջի մը որ իբր հինգ ամիսէ ի վեր
 կը ներկայացուէր անձայն անշուշտ :
 Ինչպէս յայտնի է, ներկայ թաղ-
 կորհուրդը նախաձեռնարկ եղաւ աղ-
 զային վարժարանին շէնքը կառու-
 ցանելու, և յաջողեցաւ . ասիկա
 դժուար բան մը էր արդէն, շինու-
 թեան գումարը պատրաստ ըլլալով :
 Բայց գործին չարիւն աւելի շնորհ ու
 ազմուկ արուեցաւ : Այսօր ամէն մարդ
 կրնայ տեսնել որ Ս. Սարգիս եկեղե-
 ցիին բակը օժտուած է օղատուն
 բարձր շէնքով մը, որուն շատ մօ-
 տիկ ուրիշ շինուածքի մը ճարտարա-
 պետութիւնն ալ պատիւ կը բերէ իր
 փառիկաճաշակ հեղինակին :

Մեծ թոյնով սկսուած գործ մը
 մեծաթոնջ ընթանալու էր : Թաղ-
 կորհուրդը՝ Հոգաբարձութեան հեղի-
 նակութիւն զգեստաւորելով՝ նիւթա-
 կանէն ետք բարոյականն ալ ուղեց
 վերականգնել միեւնոյն լա՛յն գծին
 վրայ : Իբրև, եթէ յաջողէր, ծայրը
 փառք կար :

Երտազրտական էն նուրբ տա-
 զանդն իսկ հիացումէ պիտի խայտար՝
 տեսնելով կալուած և հասոյթ չու-
 նեցող ազգային վարժարանի մը բա-
 րեկարգ, անայլայլ յստաշղիմու-
 թիւնը :

Բան մը պակաս չեղաւ . մանրա-
 կրկիտ ծրարի, բազմակողմանի տնօ-
 րէնութիւն, փորձ ու ճարտար ու-
 սուցչական մարմին : Այս ամէնը
 իրար կապուած ամսական 40 ոսկի-
 նոց սխեմէով մը :

Գործին մօտէն տեղեակները թէև
 գիտէին որ վարագոյրին տակ սքող-
 ուած այդ կատակերգութիւնը օր մը
 երեւան պիտի գար :

մոլ է համարում իրանց : Այդ նա-
 մակներում ազաչանքով և աղեր-
 սանքով յայտնում էին իրանց լա-
 մարդիկ և լաւ հայրենասէրներ լի-
 նելը : Մեր ողեւորութեանը չափ
 չըկար . դրամ էլ սկսեց զալ և մենք
 սկսեցինք աւելի մեծ պատրաստու-
 թիւններ տեսնել և աւելի մեծ ու-
 ժով ցոյց տալ հայ յեղափոխական-
 ների զօրութիւնը :

Մենք Նազարեկեանի հետ միայն
 նամակագրութիւն ունէինք, զլիա-
 ւորապէս ես էի պահում, և Նազար-
 րէկը այն ժամանակ մեզ հետ վար-
 վում էր իբր հաւասար ընկերների
 հետ և առ հասարակ խորհուրդներ
 էր տալիս և կարծիքներ յայտնում
 քան թէ հրամաններ արձակում :
 Պոլսից մենք միայն երկու հարիւր
 ֆրանք ուղարկեցինք Հեյնալի խում-
 բագրութեան իմ Պոլսում եղած ժա-
 մանակ : Միւս դրամը մենք գործ
 էինք անում մեծ մասամբ մեր պատ-
 րաստութիւնների վրա : Իսկ ինձ
 վրա երկու ամսում Պոլսի կոմիտէի
 դրամից հազիւ չորս կամ հինգ ոսկի
 ծախսած կը լինեմ : Մնացածի մի
 մասը կովկասից էի բերել, միւսն
 էլ Տրապիզոնից ստացայ : Իմ անձ-
 նական ծախս երկու ամսվայ մէջ
 հազիւ տաս ոսկի եղաւ, իսկ ձերբա-
 կալուածս միջոցին զբաղանում մի-
 այն երկու տաճկական ոսկի կար :

Եւ, ինչպէս ամէն ազգի ու գէշ
 բաներու վախճանը կայ, այս բա-
 նին ալ վախճանը կիրակի օր ե-
 կաւ :

Օղագարիկը պարպուած, սքաճ,
 սքաճ հոն էր, եկեղեցիին մէջ, ուր
 թոյլ բարախուսի երով իր յետին
 շունչը փչեց :

Տխուր տեսարան էր . ճառարօս
 մը ճոռոմ ու ասպետական շեշտերով
 կորոտար . . . Յանկարծ վոյր-փաւ մը
 ու նախատի՛րք . . . թաղ . խորհուր-
 դին ու հոգաբարձութեան դէմ, ու-
 թոնք կծկած էին : Թուրք, այսպե-
 նանք, սպառնական հրաւէր, դատա-
 կան տրամաբանք : Եկեղեցիին
 գմբէթը ծեծող մերթ դոռ, մերթ կծու,
 մերթ սրտաշարժ այդ ձայնին խորը
 փրտաքին արտայայտութիւններէ բո-
 լորովին անմասն, լուեկայն իմանալի
 ցաւ մը կար . քրտնաթոր մաքա-
 ումներու ատանկ զաւեշտական ել-
 քով մը պակուելովը նիւթական յոյ-
 սերու անդարձ փճացումը :

Եւ իրօք, բնաւ չվաշիւր թա-
 զական խորհուրդի մը որ օղա-
 յին հասոյթներէ պիտեճէ կազմելով
 աս տեսակ փափուկ զիրքերու են-
 թարկէ ազգին բրօֆէսորները :
 Մանաւանդ որ ստ գրօֆէսորներէն
 մէկը, իր յայտարարութեան համե-
 մատ, կառավարական բարձրագոյն
 դպրոցի մը մէջ կարեւոր պաշտօնի
 մը կոչուած է եղբր անցեալ սեպտեմ-
 բերին, և ինք, ազգային դատաւա-
 րակութեան սիրուն համար մին-
 չեւ բարեկենդան վառնաի դպրո-
 ցին բացման սպասած էր : Այդ պատ-
 բանքը ինչ նախատիքներ չար-
 դարացներ, և որքան ցատուժով ի-
 բաւուրք ունի մէկը հեռանալու այդ
 ապերախտ սեմին :

Սրտածմբիկ բան մը այս հանդէսը :
 Ո՛չ խինդ, ո՛չ երգ, ո՛չ ապագայի
 յուսալի խոստումներ . սիրութիւն
 և ցատուժ ամէն տեղ : Զախող քայ-
 լով մը մահուան դատապարտուած
 զործի մը թախծազին թաղումը :

Ու մտածել թէ հանդիսականներուն
 մէջ ծափ զարնելու չափ միամիտներ
 ալ զտնուցան, ինչպէս կըլլայ նոյն

իսկ ամենէն անհամ կատակերգու-
 թիւններէն ետքը : Մաղթենք որ
 վերջին զաւեշտը ըլլայ այս . և թա-
 զեցին լըջօրէն ձեռք առնէ իր զա-
 ւակներուն կրթութեան գործը, ա-
 ռանց այս կամ այն աղային քմա-
 հաճոյքին, իւթօրիական հաշիւնե-
 բուն զո՛ւ ընելու զայն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօջաւ, 3 Յուլիս

Քաղաքիս ազգային երկսեռ վար-
 ժարաններու տարեկան հարցաքննու-
 թիւնները կատարուեցան յունիս
 14էն 24 : Երկսեռ աշակերտները կա-
 նոնաւոր քննութիւն մը անցընելէ
 յետոյ սիրող լեզուին համար, փայ-
 լուն յաջողութիւն ցոյց տուին նաեւ
 իրենց ազգային լեզուի ընդունակու-
 թեան մասին :

Ամսոյս 28ի կիրակին ալ մրցանա-
 կարաշխութեան հանդէս կատարուե-
 ցաւ աղջկանց վարժարանի մեծ սրա-
 հին մէջ : Երկսեռ բաղմութիւնով մը
 լեցուած էր սրահը ամբողջովին : Եր-
 գերու ու ճառերու ընթերցումէն յե-
 սոյ, պակներ ու մրցանակներ բաշ-
 խուեցան առաջնակարգ հանդիսացող
 աշակերտներու : Հոգաբարձութեան
 կողմանէ՛ Տ. Ֆիւրաթ Ֆէրաթեան
 խօսք առնելով ուսման ու դաստիա-
 րակութեան վրայ շատ գեղեցիկ տե-
 սութիւն մը ըրաւ ուսման լեզուով .
 ապա շեշտելով թէ հանդէսը, ամէն
 բանէ աւելի, հանդէս մըն է հայկա-
 կան՝ հայ հաստատութեան մը մէջ,
 սկսաւ խօսիլ հայ լեզուով, որ զար-
 մանալի կը թուէր ներկայ հասարա-
 կութեան ականջին :

Տխար Ֆէրաթեան, իր ատենա-
 բանութիւնը աւարտելէ առաջ, ջերմ
 շնորհակալութիւն ու քաջալերական
 խօսքեր ուղղեց երկսեռ վարժարա-
 նին ուսուցչական մարմնին, ու
 մասնաւորապէս հայերնի ուսուցիչ-
 ներուն, որոնք վճարումի նեղ զս-
 դափարէն աւելի, ազգային պար-
 նաչում էին և ձեռք ձեռքի տուած
 որոնում էին այդ շարաբաստիկ նա-
 մակի պատճառով :

Այս տեղեկութիւնները ստանա-
 րուց յետոյ էլ աւելորդ համարեցի
 ներկայանալ հիւպատոսին, որովհե-
 տեւ համոզուած էի թէ ինձ իս-
 կոյն կը ձերբակալէին և կուղար-
 կէին Ռուսաստան : Ինձ յանձնեցի
 բախախտ, առաջուց գո՛ւ մնալով այն-
 չափ ազատութիւնից որչափ ինձ կը
 վիճակուէր :

Մենք շարունակեցինք մեր գոր-
 ծունէութիւնը . մեր համակրող-
 ների թիւը օրէցօր ստուարանում
 էր . բացի գաւառացիներից՝ մեզ հետ
 միանում էին պոլսեցի միջին և հա-
 սարակ դասակարգերից երեսասարդ-
 ներ : Մեզնով ողեւորվել սկսել էին
 և բարձր խաւերում : Մի խօսքով
 մեր կազմակերպութիւնը խորը ար-
 մատներ էր գցում Պոլսի հայերի մէջ
 և ամբապնդվում : Տերօրակոն երկ-
 րորդ փորձը որ կատարվեց Գուժա-
 բուի մայր եկեղեցում, աւաղ քահա-
 նա Սուքիասի վրա, ժամասացու-
 թեան միջոցին, անգին տպաւոր-
 ւութիւն միջոցին, հայերի վրա և
 մեծ սարսափ պատճառեց թուրք կա-
 տավարութեանը :

(Շարունակելի)

տակահանութիւն մը կատարելու զգա-
ցունեցողով աշխատած էին :
Յաջորդ օրը, երկուշաբթի, կա-
տարեցեաց նաեւ քաղաքիս բոլոր
ոսման վարժարաններուն մրցանա-
կարաշխութեան հանդէսը, տեղ ոչ
լիւնքն ընդարձակ պարտէզին մէջ,
որուն կը նախագահէր Պ. քաղաքա-
պետը. այլազգի հազարաւոր աշա-
կերաններու մէջէն, ճշմարիտ յազ-
թանակով մը՝ առաջնակարգները
պահներու մրցանակներ կընդու-
նէին Պ. քաղաքապետէն. ի գու՛ր
մինք, խուռն բաղմունքի մէջ,
մէկ ոտքի վրայ, հեւ ի հեւ, հայ
աշակերտի մը դէմքին կապառէինք՝
զայն ողջունելու համար. կարգեր
անցան ու անցան, ու մենք վեր-
ջապէս մեր յոյսերուն մէջ ընկղմե-
ցանք յուսահատ. 25էն աւելի հայ
ուսանողութեան այս ամուլ կեանքը
մենք չենք կարծեր որ իրենց ու
ամբողջ քաղաքիս հայութեան պա-
տիւ բերելու հանդամանք ունենայ :

կՈՒՆԻԿ

ՀԵՐՈՒՆՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ

—)(—

Ամերիկեան Իօլիա զրահաւորին
հրամանատար Իվընս հետեւեալները
կը պատմէ որոնք տեղի ունեցեր են
Մէրիլլաի նաւատորմին փճացումէն
ետքը :

Բոլոր մակոյկներս ծով իջեցուցի
օգնութեան հասնելու համար սպա-
նիացոց որոնք ողջ ողջ կերէին բո-
ցալառ Վիլիամսի վրայ, մինչ Բու-
պայի ապստամբները եզերքէն հրա-
ցանի կը բռնէին լողալով փախչողնե-
րը :

Սպանիացիք բոլորովին մերկ էին :
Ոմանց սրունքները տարուած էին
ոտմբէրէ : Ուրիշներ անեղիւրդն յո-
շտուած, եւ ամերիկեան մակոյկ-
ներուն խորը շատ շանչած արեամբ
ծածկուեցաւ :

Սպանիացոց կողմէ զիւցազնու-
թեան, կարգապահութեան եւ անձ-
նութեան անհաւատալի տեսա-
րաններու ներկայ եղայ : Վիլիամսի
մէկ նաւատիրին ձախ բազուկը
ջարդուիչուր եղած էր : Քանի մը
բեկորներ կը մնային մորթի փոքր
կտորով մը ուսէն կախուած : Այս
մարդը առանց օգնութեան մեր մա-
կոյկը մազլցեցաւ, եւ ներս մտածին
պէս ցցուեցաւ ու զինուորական բա-
րեւ տուաւ մեզ այնքան ցրտօրէն
որքան եթէ հանդիսաւոր այցելու-
թիւն ըրած ըլլար :

Յետոյ ուրիշ սպանիացի նաւազ
մը ներս առինք որուն ձախ սրունք-
քը գացած էր : Իր շուրթերէն կոծ
մը, ցաւի արտունջ մը չկուա :

272 սպանիացիներ առինք Իօլիաի
վրայ, եւ նաւուն կամրջակը ա-
րիւնաներկուած էր :

Նոյնն էր Կլուսիսիոյի եւ Հալիսի
վերնայարկը : Չեմ կարծեր որ
պատմութեան մէջ նմանը ըլլայ ան
քաղութեան եւ անման թափին
զոր ցոյց տուաւ Մէրիլլա ծովակա-
լը : Գիտէր թէ մահուան դերը կը
վազէր անոյս : Իր ծովակալի աս-
տիճանին վայել պատիւներով ըն-
դունեցայ զինքը : Գլուխը բաց էր
եւ հազած էր ֆանէլաէ հանդերձան-
քը զոր Կլուսիսիոյի հրամատարը
տուած էր իրեն :

Նաւազներս այս հերոս զինուորն
ողջունեցին մուկիս հուրարներով :
Յօժարակամ կը համակերպէր պատե-
րազմի բախտին եւ իր վրայ ամէն

բան կը յայտնէր ազնիւ սրտի տէր
մարդը :

Իօլիա մէջ կեցած տոնէր Մէրիլլա
վաստակեցաւ սպաններուն ու նաւազնե-
րուն համակրանքը :

Վիլիամսի սպանները կը բացատ-
րեն թէ Մ. Մերիլլայի ներքին արագա-
ձիգ հրանօթները բացարձակապէս
արգելիցին սպանիացիները իրենց
սեպհական թնդանօթներուն մօտե-
նայու :

Իօլիա մէկ ոտմբէր պայթեցուց
Վիլիամսի առաջակողմի մէկ թորփիլը
որ քսան սպանիացիներ նետոց կա-
մըջակին վրայ եւ անոնց գողգողուն
մարմինները գահալիփեց հրդեհի հնո-
ցին մէջ : Բոցերը կը ժայթքէին ա-
մէն մէկ ոտմբէր բացած ծակէն եւ
կերթային կը լիզէին կամրջակին
վրայի վերաւորները : Յուր եւ հո-
գեվարքի կոծեր կը բարձրանային
լցարանէն եւ Վիլիամսի կամրջակէն,
հրդեհին ճարձատիւններուն եւ արագ
արագ իրարու յաջորդող պայթիւն-
ներուն մէջտեղ :

Այս պահուս, Սանթիակոի շուրջ
ծովեզրը կը ներկայացնէ քսանիւր
տեսարան մը :

Գիշարէն թռչունները ծովափին
վրայի դիակներով կը ճարակին :
Ահագին թուով կիջնան խլեակնե-
րուն վրայ : Մերթ ծովը փոռնք կը
նետէ մարդկային կտորուանք. հոս,
հայտուած մարմին մը, աւելի հե-
ռուն ուրիշ կտորներ գորս շանա-
ձուկերը կրծած են :

Նլիակներու բեկորներով շինուած
խաչ մը կը կանգնի ընդարձակ փոսի
մը վերեւը ուր խառնիխուռն թաղ-
ուած են աւազին մէջ անուննին ան-
յայտ գիւղիներ որոնք համբուած
խակ չեն :

ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ ԿՏԱԿԸ

—)(—

Ուրախութեամբ կարճանա-
գրենք թէ Խառն ժողովը մեր-
ժողովական պատասխան տայու քա-
ղութիւն ունեցեր է աւազակա-
պետ Գրիգորի պահանջումնե-
րուն : Արդէն այդ ժողովը անմիտ
բան մը ըրած էր այդ ապօրէն
ուղիին մէջ բանակցութիւններ
կատարելով : Ահա թէ ինչ պա-
րագաներու մէջ տեղի ունեցեր
է խզումը. վարչութեան ծրա-
գրին համեմատ, ժառանգորդ-
ները Վարչութեան տրուելիք
յայտարարութեամբ մը պիտի
ըսէին թէ «Տիգրան Գարակէօզ-
եանի կրակը ես առնելով ազգ.
Վարչութեանէն, ի փոխարէն 20
հազար ոսկի կը նուիրեն անոր
յիշատակին համար» . աւազակա-
պետը բնաւ չընդունիր այս «կը-
տակ» բառը : Պէտք է եղեր շա-
տանալ Տիգրան Գարակէօզեանի
«թղթերը» ըսելով : Ասկէց զատ
Վարչութեան ծրագիրը կը պա-
հանջէր որ յայտարարութեան
մէջ յիշուէր թէ ժառանգորդ-
ները կը խոստանան ժառանգու-
թեանէն իրենց ինկած բաժնէն
օգտակար նուէրներ եւ կտակներ
ընել ազգին : Այս կէտն ալ
մերժուած է աւազակապետէն
ինչպէս նաեւ մուրհակը նորա-
տունկեանի կողմէ վաւերացուած
ըլլալու առաջարկը :

Եւ այսպէս վերջացաւ առ այ-
ժմ այս գարակէօզական զաւեշտն
ալ՝ ամբողջ գերպատանի մը վը-
րայ փոխելով ամօթի սեւ շղարշը
որուն թափանցիկութեան տակ
միշտ պիտի երեւան շարք մը
շահասէրներու լրբենի նկարա-
գրերը :

Իսկ ազգը, հակառակ քանի
մը հազար ոսկիի վնասի, միշտ
նոյն բարձր, նոյն հպարտ ազգը
պիտի մնայ :

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Պոլսոյ լրագիրները շատ տը-
խուր խօսքեր կը պարունակեն
Ազգ. Հիւանդանոցի մասին : Տե-
սակ տեսակ զեղծումներու բոյն
գարձած է ազգին այդ տունը :
Ս. Յակոբայ Որբանոցը աւելի
անմխիթար վիճակի մէջ կը նկա-
րագրուի : Ո՛չ միայն անբաւա-
կան չափով կը հոգացուին պատա-
պարուած որբերը, այլ և Իգմիրի
Փէրքէնին ճաշակովը քսանիւր
անբարոյականութիւններ տեղի
ունեցած են այն տեղ : Կրթական
Տեսուչը առաջարկեր է որբանոցը
Սկիւտար փոխադրել : Օրմանեան
տակաւին չէ յաջողած խելքը
գլուխը Հոգաբարձութիւն մը
կազմել այդ սփոփանքի հաստա-
տութիւնը փափաքելի կերպով
մատակարարելու :

Կառավարական վերջին հրա-
մանագրին համեմատ, Ատաբա-
զարի 30 հայ բանտարկեալները
ազատ թողուեր են : Այս անմեղ-
ները ստիպուեր են հեռացած ա-
տենին աղօթքներ մըմուռ վի-
րենք շարժարդներուն արեւշա-
տութեանը համար : Տխուր հարկ :

Կըսուի թէ Իգմիրցիները
մտադիր են իրենց վարժարան-
ներուն աստիճանը բարձրացնե-
լով, բարձրագոյն ընթացք մըն
ալ հաստատել զուտ վաճառակա-
նական գիտելեաց համար : Մաղ-
թենք որ այս ազգօգուտ իղծերը
մեռեալ տառ չմնան : Մանաւանդ
հաշիւով գործեն՝ խեղճ Վառ-
նաին պէս կէս ճամբան չմնալու
համար :

Մինչեւ վերջին օրերս հա-
զարի մօտ Վանեցիներ այլ և այլ
տեղերէ իրենց հայրենիքը վե-
րադարձեր են. կըսուի թէ տե-
ղացիք ջանքեր կընեն ամօթալի
նմբաճգութեան հետեւանքով ա-
ւերած իրենց տունն ու տեղը,
հիասքանչ այգեպտանները վերա-
րաշինելու :

Վանայ Կլորդար թաղէն 70-
80 հայ տուներ վերջերս դաւա-
նափոխ եղեր են : Տոմինիկեան-
ներու գործն է այս սրոնք բացա-
ռիկ յաջողութիւն մը կը գտնան
ամերիկեան միսիոնարներու նը-
պատաները նուազելէն ի վեր :
Յաղթական ջիւղերը տուն մը
վարձելով եկեղեցիի վերածեր

են, ուր նորեկ զաւանափոխները
պիտի յաճախեն ջանալով մոռ-
նալ իրենց պապերէն մնացած
ամէն պատուէր ու կտակ : Սոս-
կալի է նօթութիւնը, բայց զայն
շահագործողներն ալ անորակելի
անբարոյականներ են :

Կարնոյ Կարմիր վանուց,
Կարնոյ Ազգատ. Խնամակալու-
թեան և Մարաշի որբանոցնե-
րուն լուսանկարները Պատրի-
արքարան զրկուեր են : Փողոց-
ները հաւաքուած այդ նօթի և
մերկ որբերուն գէմքերը կը
ժայտին եղեր պատկերներուն
մէջ :

Երանի՛ թէ իրականին մէջ ալ
այդպէս չըլլար, ի պատիւ հայ
բարեգործներու : Կա՛յ աւելի ան-
խառն հաճոյք մը քան տա-
ւապեալի մը արցունքը սըր-
բել :

Պատրիարքարանը Հայաս-
տանի մէջ երկու նոր որբանոց-
ներ եւս պիտի բանայ բարեգոր-
ծներու նպատակով : Որբանոցնե-
րէն մին Սեբաստիոյ մէջ պիտի
հիմնուի 40 որբերու համար,
տարեկան 240 ոսկի ծախքով :
Որբանոցներու միօրինակ կազ-
մակերպութեան համար, Պատ-
րիարքարանի մէջ հրահանգ մը
խմբագրուած է որ ամէն կողմ
պիտի զրկուի :

Կովկասի ուսումն. շրջանի
վարչութիւնը արդէն քանի մը
տեղեր գիւմուսներ ըրեր է հա-
յոց եկեղեցական-ժխական դըպ-
րոցներու վարչութիւններուն
դպրոցական կալուածքները և
զոյքը իրեն յանձնուելու համար :
Կարելի չէ երեւակայել քաղա-
քակրթեալ բունապետութեան
մը աւելի պերճախօս մէկ արտա-
յայտումը, քան կրթական
գործին այս կողոպուտը Կովկա-
սի մէջ :

Թավրէժէն կը գրեն թէ
նոյն քաղաքին մէջ ո.օ.ք. Լէպսի-
ուսի որբանոցին տեսուչ Բերկ-
մանի և վերակացու Պ. Բաղդա-
սարեանի միջեւ վէճ ծագեր է և
թէ այս վերջինը հակառակ իր
լաւ յատկութիւններուն պաշտօ-
նանկ եղեր է : Դարձեալ Դաւ-
րէժէն կիւմացներն թէ սօքթոր
Լէպսիուս Ուրմիոյ մէջ 5—6,000
թումանի արժողութեամբ գետին
մը գնած է ընդարձակ որբանոց
մը կառուցանելու համար :

Հապեչաստանէ գրուած նա-
մակ մը նոյն երկրին մէջ հայ-
կական գաղթականութիւն մը
հիմնելու առաջարկը կընէ, թը-
ւելով այն առաւելութիւնները
զոր հայը կընայ գտնել այդ ան-
մշակ երկրին մէջ : Ահա ձեզ ազ-
գասէր մը որ պերճախօսութեան
զանձեր կը թափէ շատագովելու
գաղթականութիւնը, մեր ազգին
է՛ն մեծ թշնամին :

—)(—

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)(—

Երգչուհի Աննա Սիմոնի ըստ պաննոթեան համար մահուան դատապարտուած Տէչքո Պոյնէֆ, թիկնապահ իշխանին, և ոստիկանապետ Գարլ Նովէլիչ, անցեալ ԵՏ. առաւօտ Թիլիպէի բանտին մէջ կազախան հանուելով իրենց ոճիբը քաւեցին:

—Սըր Ահմէտ Պարզէթ անդէրամատէրներու խմբի մը կողմէ Պոլիս դացեր է կարեւոր մննաշնորհներ ձեռք բերելու: Եւրոպեան թրքասէր քաղաքագէտներուն ժամոցն է աս:

—Նոր որոշման մը համեմատ, Թուրքիայէն Պուլկարիա պտուղներմուծողները պէտք է ձեռքբերին վկայագիր մը ունենան հաստատող թէ ապրանքները ֆիլոքսէրիայէ զերծ են. ապա թէ ոչ մուտքը թոյլ չպիտի տրուի Պուլկարիոյ մէջ:

—Պոլսոյ մէջ շուները այնքան շատցեր են որ Պայազիտի հրապարակին վրայ անցորդներու ձեռքէն ուտելիք սկսեր են յափշտակել: Սէրվէթ օսմ. կառավարութեանէն կը խնդրէ ի կարգ հրատարակել շուները... և ասպարէզը թողուլ միայն մարդակերպներուն:

—Թուրքիոյ պետական խորհուրդը որոշեր է դատ բանալ նախկին ոսկերչապետ Տիւրքան Պողոս պէյի ժառանգորդներուն դէմ, զանձեւու համար 735,000 զրուշի գումարը զոր հանգուցեալը կը պարտի եղբոր օսմ. զանձուն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Որչափ ատեն է որ Սանթիակոի գրաւման անհիմն լուրերը կը հաղորդուին շարունակ. բայց աս անգամ ա՛լ ընաւ տարակոյս չիկայ. Սանթիակոն անձնատուր եղած է, վասն զի քաղաքին քաջարի պաշտպան զօրավար Թուրալ հասկցաւ երկարատեւ ընդդիմութեան մը ապարդիւն ըլլալը:

Այս անձնատուութեան լուրը անպատճառ խորունկ տպաւորութիւն պիտի գործէ սպանիական ժողովուրդին վրայ և ուժ պիտի տայ խաղաղութեան կուսակիցներուն: Պ. Սակասթա որ նախարարական տաղանայի վերջին զրոյցներուն հակառակ՝ իր պաշտօնին վրայ կը մնայ, աւելի հաշտարար ոգի մը ցոյց կուտայ այժմ: Յայտարարեր է թէ Գուպաի պատերազմը թողուելու է, նկատելով որ ամերիկացիք տէր են ծովու և կրնան կղզին գրաւել սովի բռնելով զայն: Առետարական բազմաթիւ ընկերութիւններ

խնդրադրեր մատուցեր են կառավարութեան՝ խաղաղութեան արագ կնքումը հայցելով՝ եթէ չուզուիր որ Սպանիա տնտեսապէս բոլորովին փճանայ:

Սանթիակոի անձնատուութեան պայմանը ստորագրուել է յուլիս 3ին: Միացեալ-Նահանգներն ընդունել են սպանիացոց պայմանները, որոնք ետ քաշուին պատերազմի պատիւներով և իսկոյն ճամբայ հանուին դէպ Սպանիա: Սանթիակոի մէջ գերի բռնուած սպանիացոց թիւն է 12—15,000:

—Մատրիտի լրագրիները կըսեն թէ սպանիական կառավարութիւնը յուլիս 4ին սկսեր է խաղաղութեան բանակցութիւններուն՝ Ուաշինկթընի ֆրանսական դեսպանին միջոցովը: Ամերիկեան կառավարութիւնը Սպանիոյ դահլիճին հետ համաձայն է եղեր հանրաքուէի (բլէպիսիդ) մը ենթարկել այն վարչութիւնը զոր Գուպա կը փափագի: Սպանիա ամբողջովին պիտի ընդունի եղբոր հանրաքուէին պատասխանը:

—Իբր թէ Սամուըն ծովակալին նաւատորմը մտեր է Սանթիակոի նաւահանգիստը:

—Սպանիոյ մէջ հանրապետականները խաղաղ կը մնան, մինչ քարտեանք ամբողջ երկիրը կը կը պտըտին խռովութիւն յարուցանելու համար: Կառավարութիւնը ի հարկին 200,000 զօրքունի պատրաստ:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Ֆրանսական կառավարութեան՝ Բարիլի օսմ. պանքաին հելլենական տուգանքէն վար դնել տըւած գումարն է մէկ միլիոն վեց հարիւր հազար ֆրանք, Իտալիոյ պահանջն ալ միտաին, որ է չորս հարիւր հազար ֆրանք:

Ֆրանսական և իտալեան կառավարութիւնները այժմ Բարիլի մէջ կը պատրաստուին դատարանի միջոցով արդարացնել իրենց պահանջները:

—Սուլթանը ֆրանս. կառավարութեան նուիրեր է զետին մը Կէլիպօլուի մօտ, Տարտանել, Խրիմի պատերազմին մէջ մեռնող ֆրանսացի զինուորներուն յատուկ յիշատակարանի մը կանգնման համար:

—Սմանս Հափաս կիմանայ Գանեաէն թէ Էթիոպիէի գործակալները մոլեգին բորբականատ մը կրնան համոզելու համար կրէտայիները որ կղզիին տէրութեանց ձեռքով պատրաստուած՝ առժամայ կաղմակեպութեան ծրագիրը ընդհանուր ու վերջնական տնօրինութիւն մըն է որ պիտի կարգադրէ զլիաւոր խնդիրները և պիտի արդիւնէ օսմ. քաղաքային ու զինուորական իշխանութեանց հեռացումը:

Էթիոպիէի Էթիոպիան կը ջանայ համոզել ապստամբները բողոքելու և պնդելու ամէն բանակցութեան առաջ՝ թուրք զօրքներուն իշխանութեանց անմիջական հեռացումի պէտքին վրայ և վերջապէս փափաք յայտնելով թէ Եթիոպիա իշխանը կառավարել կարգուի:

—Կրէտական ժողովի նախագահին գիրքը դժուարացած է աս պատճառով որ այս ժողովին անդամներուն մէջ Էթիոպիէի Էթիոպիան շատ գործակալներ ունի:

—Իսլամները նմանապէս համոզուած են թէ ծովակալներուն առաջարկած տնօրինութիւնները վերջնական են, և կը բողոքեն որովհետեւ իրենց խորհուրդհարցուած չէ կղզիին ներքին կաղմակեպութեան գործին առթիւ, ուր իրենցմէ ոչ ոք կը գտնուի:

—Աթէնքի մէջ զրոյց կայ թէ Եթիոպիա իշխան այս ամառ պիտի նշանուի ռուս մեծ-դքսուհիի մը հետ, հաւանօրէն Էլէն Վլախմիրօֆը մեծ-դքսուհիին որ Վլախմիր մեծ-դքսին աղջիկն է, ծնած 1882ին:

—Բարիլի մէջ ձերբակալուեցան հրամատար Էսթէրհազի և զնդապետ Բիքառ, Տրէյֆուսի խնդրին համար որ մշտաբար զիճակի մէջ կը գտնուի:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

—)(—

Խմբագրութիւնս իր ջերմ շնորհակալիքը կը յայտնէ բոլոր այն պատ. բաժանորդներուն որոնք ինքնաբերաբար և առանց մեր հրաւերին սպասելու մինչեւ այսօր հեռակէտէ իրենց բաժնեկիները զրկած են մեզ, և կը սիրէ յուսալ որ չվճարողներն ալ, մեր այս անգրանիկ զիկոյցը ստանալով, պիտի փութան անյայտ իրենց փոքրիկ պարտքը վճարել, նամանաւանդ խորհելով թէ արդէն առաջին վեցամսեան մօտ է լրանալու:

Ն Ա Մ Մ Ա Ս Ո Ւ Փ

—)(—

Պ. Թօփալենց, (ցնոր տնօրէնութիւն): Անտիլի է որ միշտ կրկնեմք ինչ որ առջի օրէն ըսած էինք: Անգամ մը եւս աչքէ անցուցէք մեր նախորդ գրութիւնները: Առաջին օրէն ստորագրութիւն տուինք թէ մենք ենք պատասխանատու. յօդուածին ձեռագիրը ուղեցիք, տուինք. յօժարեցանք ալ երբորք թուղթ մը եւս որ կօպտէր գտնու մեր անունին դարձնելու: Ա՛լ ինչ կուզէք: Կուզէք որ ձեր տնայ դիւանագէտի, անխելք բարեկամի կափէրը դարձանք: Արտօնեցիք ձեզ ի լըյս ընծայել մեր վերջին թուղթը, որպէսզի հանրութիւնը դատէ անոր ուժը: Խօնչու

չըրիք, վախցաք հանրային կարծիքէն, որ անշուշտ ձեզի պիտի այպանէր: Ձեր կարծիքները պէտք չեն մեզի. ինչպէսզ ամառը կ'ըլլու, Անկապ եւ մերթ լիբր թոթովանքներու արձագանգ ըլլալ չէ անոր կոչումը: Ձեր վերջին գրութիւնը ծանր խօսքեր, հաւանօրէն լուսանքներ կը պարունակէ եղբր, Երախտագիտութիւնը պարտք կը դնէ ձեզ երթալ Իրաւունքի արգոյ խմբագրապետին ձեռքը պագնել, որ ձեր բարի համբաւին մնացորդ մասին խնայեր է այդ սողերը յապաւելով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ

—)(—

ԵՆՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

—)(—

ԳԻՆ 1 ՅՐԱՆԻՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը:

ՊՕՐՍԱ

Վառնա 7 Յուլիս

ՊՈՒՂՏԱՅ
Վախօն եօգ, լիպրա 47—51, հէքթօլ. 8—8.20 ֆրանք
Արապա եօգ, լիպրա 47—55 հէքթօլ. 6.50—7 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 43—45 հէքթօլ. 4—4.40 ֆրանք
Առապա մուամէլէսի նաբօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.
Կիւնտէ 10—15 արապա արբա, կէլմէքտէ տիր:

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՁԵԱՆ

Կ Ո Շ Կ Ա Կ Ա Ր

Մուսալլա, հաճի Հասան աղաի օթէլին տակ

—)(—
Ճաշակաւոր, տոկուն, ձեւոր կոշիկ շինել տալ ուղղը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանձեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կ'ըլլայ:
Գիներ դիւրամատչելի:

ՃԱՇԱԿԱՆ ԵՒ ԶԲՕՍԱՐԱՆ

—)(—
ՀԱՃԻ ԲԱՆԱՔՕՒՆ ՃԻՇԴ ԴԵՄԸ
Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիւֆեկլի-սեան եւ ընկեր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովատուն, մաքուր ու գեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ եւ մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափկակեցիներ իրենց զարնանային ու ամառային ժամագրավայր մը ընեն զայն զբօսելու եւ ճաշելու: Պոնտոսեան արտորաբար հովերուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան առջեւ:

Հակառակ այս հրապարակէ առաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ զիւրամատչելի գիներ թէ ըմպելիքի թէ կերակուրի բոլոր մասին: